26.12.2018թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Շիրակի մարզի համայնքների 2018 թվականի բյուջեների սեփական եկամուտների տասներկու ամիսների հավաքագրման արդյունքների մասին:

2018թ. դեկտեմբերի 25-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 87.3%-ով նախատեսված 2,554,552.0 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 2,230,353.2 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 324,198.9 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2018թ. բյուջեների տասներկու ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2018թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	409,548.4	317,497.7	- 92,050.8	77.5
Գույքահարկ	942,392.6	811,326.9	- 131,065.7	86.1
Պետական տուրք	47,580.0	48,138.5	558.5	101.2
Տեղական տուրք	135,291.1	129,215.1	- 6,076.0	95.5
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	359,540.2	300,218.6	- 59,321.6	83.5
ա/ հողի վարձավճար	299,036.6	242,889.1	- 56,147.5	81.2
բ/ գույքի վարձավճար	60,503.6	57,329.5	- 3,174.1	94.8
Այլ եկամուտներ	660,199.7	623,956.4	- 36,243.3	94.5
Ընդամենը սեփական եկամուտներ	2,554,552.0	2,230,353.2	- 324,198.9	87.3

2018թ. տասներկու ամիսների փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2017թ. համեմատությամբ կազմում է 3.1% կամ ավել է հավաքագրվել 67,343.2 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

h/h	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2018թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1	Անի	171,221.0	115,773.3	- 55,447.7	67.6
2	Ամասիա	99,647.6	82,780.6	- 16,867.0	83.1

	այդ թվում՝				
2.1	Ամասիա	58,569.5	48,505.5	- 10,064.0	82.8
2.2	Արփի	41,078.1	34,275.0	- 6,803.1	83.4
3	Արթիկ	392,715.0	342,421.5	- 50,293.5	87.2
4	Ախուրյան այդ թվում՝	289,999.5	217,833.4	- 72,166.1	75.1
4.1	Ախուրյան	185,336.7	144,663.3	- 40,673.4	78.1
4.2	Մարմաշեն	104,662.8	73,170.1	- 31,492.7	69.9
5	Աշոցք այդ թվում՝	102,104.8	77,222.5	- 24,882.3	75.6
5.1	Աշոցք	64,336.1	51,160.3	- 13,175.8	79.5
5.2	Սարապատ	37,768.7	26,062.3	- 11,706.4	69.0

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2018թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Անիի տարածաշրջանում՝ 67.6%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 85.3% կամ նվազման տոկոսը կազմում է 17.7, գումարային նվազումը կազմել է 26,616.6 հազ. դրամ:

Մարզի քաղաքային համայնքները 2018թ. սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 94.7%, **Արթիկ** քաղաքը՝ 87.2%:

Մարզի թվով 30 համայնքներ չեն ապահովել 2018թ. տասներկու ամիսներին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 87.3%-ը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

ՀՀ պետական բյուջեով 2018 թվականին ինն ամիսներին նախատեսված 4,422,664.5 հազ. դրամ <<Դոտացիան>> ամբողջությամբ ֆինանսավորվել է:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ՖԻՆԱՆՍԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում 2018թ. ընթացքում պետական բյուջեի միջոցներով և այլ ֆինանսական աղբյուրներով իրականացվել են շուրջ **20,1** մլրդ դրամ գումարի կապիտալ ներդրումներ (աղյուսակը կցվում է):

Բնակարանաշինություն

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամը Գյումրու քաղաքապետարանի հետ համապեղ Գյումրի քաղաքում իրականացրել է սոցիալական բնակարանների կառուցման աշխատանքներ 83,6 մլն. դրամ գումարով, («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ 74,0 մլն դրամ, Գյումրի համայնք՝ 9,6 մլն դրամ համաֆինանսավորմամբ):

Կրթական օբյեկտների շինարարություն

ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ ՀՀ Շիրակի մարզի թվով 5 նախակրթարաններում իրականացվել են 381,419 մլն. դրամ գումարի, իսկ 2 դպրոցներում (Փանիկ, Պեմզաշեն) 121,0 մլն. դրամ գումարի կառուցման և վերակառուցման աշխատանքներ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի պատվիրատվությամբ ավարտվել են «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի ջեռուցման համակարգի վերականգնման աշխատանքները՝ 16,5 մլն.դրամ գումարով:

Սիմոնյան կրթական հիմնադրամի պատվիրատվությամբ իրականացվում են Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի վերակառուցման աշխատանքները՝ 245,0 մլն դրամ գումարով:

Սպորտային օբկեկտների շինարարություն

ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի պատվիրատվությամբ Սպանդարյան համայնքում իրականացվել են Սպանդարյան համայնքի համայնքային մարզադաշտի կառուցման աշխատանքները 32,3 մլն. դրամ գումարով:

Ջրամատակարարում և ոռոգում

ՀՀ ԿԱ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ-ն Գյուղական կարողությունների ստեղծում ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքում իրականացրել է Հոռոմ համայնքի ջրամատակարարման համակարգի վերանորոգման աշխատանքներ 352,0 մլն. դրամ գումարով:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի պատվիրատվությամբ 2018թ. սկսվել են Գերմանիայի զարգացման վարկերի բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Կապսի ջրամբարի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Շինարարական աշխատանքները կսկսվեն 2020թ-ին:

ՀՀ կառավարության 29.09.2018թ. № 1028-Ն և 29.09.2018թ. № 1073-Ն որոշումների համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզում առաջնահերթ հիմնախնդիրների լուծման նպատակով ՀՀ Շիրակի մարզին հատկացվել է 367,0 մլն դրամ գումար: Ծրագրի շրջանակներում իրականացվելու են թվով 10 կրթական օբյեկտների, 2 մարզա-մշակութային, 3 առողջապահական, 2 համայնքում հեղեղատարների մաքրման և Ամասիա համայնքում բրդի վերամշակման արտադրամասի վերանորոգման աշխատանքներ: Ամասիա և Ոսկեհասկ համայնքներում աշխատանքներն ավարտվել են: Գյումրու թիվ 18 դպրոցում շինարարական աշխատանքները կավարտվեն ս/թ դեկտեմբերի 26-ին: Մնացած օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերում իրականացվում են լրամշակման աշխատանքներ:

Հարկ է նշել, որ մարզի բնակավայրերում, հատկապես Գյումրի քաղաքում, անհատ ներդրողների և ձեռներեցների կողմից իրականացվել են ավելի քան 2 մլրդ դրամ գումարի շինարարական աշխատանքներ: Առանձնակի հիշատակման արժանի է Գյումրի քաղաքի

պատմական կենտրոնի թվով 4 փողոցների և Վարդանանց հրապարակի վերակառուցման աշխատանքները (շուրջ 1.1 մլրդ դրամ):

Վարչության կողմից իրականացվել են Գյումրի քաղաքում՝ 74 և Հառիճ համայնքում՝ 1 քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքներում ներկայացված հողահատկացումների և նախագծային առաջարկությունների համաձայնեցումների, Գյումրի համայնքի գլխավոր հատակագծում՝ 5, Ախուրյան համայնքի գլխավոր հատակագծում՝ 2, Արթիկ համայնքի գլխավոր հատակագծում՝ 2 փոփոխությունների, ինչպես նաև Գյումրի քաղաքում և մարզի այլ բնակավայրերում թվով 11 օրենսդրությանը հակասող, ինքնակամ շինարարության կանխման, կասեցման գործընթացներ:

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2018 թվականին մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը կազմել է շուրջ 11.6 միլիարդ ՀՀ դրամ:

Համաշխարհային բանկի «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի» շրջանակներում հիմնանորոգվեց և շահագործման հանձնվեց Տ-7-41՝ Հ32-Վահրամաբերդ-Հովունի-Մ1 6 կմ երկարությամբ մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհը: Նույն ծրագրի շրջանակներում կազմվեց նաև Տ-7-25՝ Մ1-Հայրենյաց-Տուֆաշեն-Հ83 մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

2018 թվականին շարունակվել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 3-ի Լանջիկ-Գյումրի 27,5 կմ երկարությամբ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները (74.0 մլն եվրո):

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի ֆինանսավորմամբ Գյումրու քաղաքային ճանապարհներ՝ ծրագրով սկսվել են Գյումրի քաղաքի թվով 12 փողոցների վերակառուցման աշխատանքները, որոնք շահագործման կհանձնվեն 2019 թվականի գարնանը(23.6 մլն եվրո գումարով):

Մարզի համայնքներից (Գյումրի, Ազատան, Ախուրյան, Աշոցք, Առափի և Անուշավան) ճանապարհաշինության ոլորտում ներկայացված սուբվենցիաների ծրագրերից ՀՀ կառավարության կողմից հաստատվեցին թվով 6-ը: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 269.96 մլն դրամ, որից 175.89 մլն դրամը ֆինանսավորվել են համայնքային բյուջեներից, իսկ 94.07 մլն դրամը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

2018 թվականին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր օգտագործման պետական մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների կազմակերպման համար ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացվել էր 161.01 մլն. դրամ գումար: Հատկացված 161.01 մլն դրամ գումարով իրականացվում են 241.0 կմ երկարությամբ ձմեռային պահպանման և 59.0 կմ երկարությամբ ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներ:

Ներկայումս ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերի (համայնքների) տրանսպորտային սպասարկումն իրականացվում է կանոնավոր ուղևորափոխադրումների 74 երթուղիներով, այդ թվում՝ 20 միջմարզային և 54 ներմարզային երթուղիներով: Երթուղիների սպասարկումն իրականացվում է 15 ուղևորափոխադրող կազմակերպությունների կողմից: ՀՀ Շիրակի մարզի 119 բնակավայրերը գտնվում են մարզպետարանի կողմից ձևավորված կանոնավոր ուղևորափոխադրումների 54 երթուղիների ուղեգծերում: Բնակավայրերից 110-ով անցնում են ինչպես ներմարզային,

այնպես էլ միջմարզային մի քանի երթուղիների ուղեգծեր: Դեռևս տրանսպորտային կապով ապահովված չէ Արփի համայնքը, թվով 9 բնակավայրերով:

Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանց ստեղծելու նպատակով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ համատեղ մշակվել է ՀՀ Շիրակի մարզի նոր երթուղային ցանցը: Երթուղային ցանցում ընդգրկված են թվով 35 ավտոբուսային երթուղիներ, որոնք ընդգրկում են մարզի բոլոր բնակավայրերը:

ԿՈՄՈՒՆԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ կառավարության 06.03.2018թ. N303-Ն որոշման համաձայն՝ 2000-2004 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, Լինսի, «Ջոն և Կարեն Հանթսման», «Հայաստան» համահայկական հիմնադրամների և Ամերիկյան կարմիր խաչի միջոցներով Գյումրի քաղաքում կառուցված բազմաբնակարան շենքերի դեռևս չսեփականաշնորհված թվով 449 բնակարանները նվիրաբերվել են Գյումրի համայնքին:

ՀՀ Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար նախատեսված բնակարանային ապահովման ծրագրի շահառու ճանաչված անձանձ համար անհատական բնակելի տների կառուցապատման նպատակով «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի կողմից ձեռք բերված թվով 34 անշարժ գույքերը ՀՀ կառավարության 12.04.2018թ. N424-Ն որոշման համաձայն հանձնվել են նախկին սեփականատերերին (թվով 34 ընտանիքների հետ կնքվել են նվիրատվության պայմանագրեր):

ՀՀ կառավարության 15.11.2018թ. N1319-Ն որոշման համաձայն ՀՀ Շիրակի մարզի Առափի համայնքի սողանքային գոտուց առաջնահերթ վերաբնակեցման ենթակա Մնացական Բաղդասարյանի ընտանիքի, Ախուրյանի համայնքի Ջրառատ բնակավայրի բնակիչ Արտակ Սամվելի Ալոյանի բազմազավակ ընտանիքի և Պեմզաշենի համայնքի բնակիչ Հայկազ Կամսարի Սարոյանի ընտանիքի բնակարանային խնդիրների լուծման համար բնակարանների գնման վկայագրերի միջոցով ֆինանսական աջակցության տրամադրման նպատակով ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացվել է 20,780.0 հազ. դրամ գումար: Ծրագրի շրջանակներում վկայագիր ստացած թվով 3 ընտանիքները սահմանված ժամկետում ձեռք են բերել բնակարաններ:

ՀՀ կառավարության 29.03.2018թ. N361 որոշման համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի քաղաքային բնակավայրերում իրականացված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում տեղակայված ոչ հիմնական շինությունների փաստագրման գործընթացի շրջանակներում Գյումրու և Արթիկի քաղաքապետարանների կողմից ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված ցուցակներն (փաստագրման աղյուսակային մասերը) ուղարկվել են ՀՀ ոստիկանություն և ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե (ցուցակում նշված քաղաքացիների մշտական բնակության մասին, ինչպես նաև բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ տեղեկատվություններ ստանալու համար): Ներկայումս իրականացման փուլում են գտնվում ժամանակավոր կացարանների քարտեզագրման աշխատանքները:

ՀՀ կառավարության 10.08.2017թ. N1016-Ն որոշման համաձայն՝ 2018 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում հաշվառված թվով 4 զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների հերթացուցակներն ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն բնակարանային ապահովման ծրագրում ընդգրկվելու նպատակով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԻ ԵՎ ՀԳՄՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության կողմից մշտական աշխատանքներ են տարվել մարզի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված գործունեության ապահովման ուղղությամբ:

Նախապատրաստվել և անցկացվել են մարզի խորհրդի 4 հերթական նիստեր, որոնցում քննարկվել են համայնքների 2018 թվականի բյուջեների սեփական եկամուտների կատարման, գյուղատնտեսական աշխատանքների, ոռոգման և բերքահավաքի նախապատրաստման, 2017-2018 ուս. տարվա ամփոփման և 2018-2019 ուս. տարվա նախապատրաստման, հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, կարիքների գնահատման և հանրակրթություն վերադարձնելու ուղղությամբ կատարվող աշխատանքների, ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների կատարման ընթացքի, համայնքներին սուբվենցիաների հատկացման նպատակով հայտերի ներկայացման կարգի, սուբվենցիաների տրամադրման գործընթացում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրերի իրականացման ընթացքի, մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2018 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին կատարված աշխատանքներին վերաբերող հարցեր:

2018 թվականի ընթացքում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն ՀՀ Շիրակի մարզպետարան են առաքվել մարզի համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից ընդունված որոշումները, որոնք ուսումնասիրվել են մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից: Ուսումնասիրության արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինների ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են առարկություններ և ուղարկվել են համայնքներ՝ դրանք ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու առաջարկությամբ: Արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ոչ իրավաչափ իրավական ակտերը համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրությանը և արդյունքների մասին ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացվել են տեղեկություններ:

Ձեռնարկված միջոցների արդյունքում, նախորդ տարիների համեմատությամբ, էականորեն բարելավվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրավական ակտերի ընդունման գործընթացը, չնայած որ դեռևս արձանագրվում են առանձին դեպքեր, երբ որոշումները օրենքով սահմանված յոթնօրյա ժամկետում չեն առաքվում մարզպետարան:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունվարի 19-ի թիվ 15-Ա հրամանով հաստատված՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության» աշխատանքային ծրագրով նախատեսված ՀՀ Շիրակի մարզի թվով 14 համայնքներում, ըստ եռամսյակների իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն:

Հիմք ընդունելով իրավական և մասնագիտական հսկողության հարցաշարերը՝ ուսումնասիրվել են համայնքների ավագանիների լիազորությունների և համայնքների ղեկավարների սեփական ու պետության պատվիրակած լիազորությունների իրականացման օրինականությունն ու արդյունավետությունը առողջապահության, արտակարգ իրավիճակների, հողօգտագործման, պաշտպանության, առևտրի և ծառայությունների, կրթության, մշակույթի քաղաքաշինության, սոցիալական պաշտպանության, ընդերքօգտագործման ու անասնաբուժության և այլ բնագավառներում:

Ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, ըստ համայնքների կազմվել են համապատասխան արձանագրություններ, որոնցում նշվել են համայնքների ավագանիների և համայնքների ղեկավարների սեփական ու պետության պատվիրակած լիազորությունների իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքներում տեղ գտած խախտումները, թերություններն ու բացթողումները:

Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները քննարկվել են համայնքների ավագանիների նիստերում, արձանագրված խախտումները համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ:

Արձանագրված խախտումների վերացման համար, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմվել, հաստատվել ու գործողության մեջ են դրվել համապատասխան ժամանակացույցներ, համաձայն որոնց՝ համայնքների կողմից վերացվել են արձանագրված բոլոր խախտումները, թերություններն ու բացթողումները:

Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում դրական տեղաշարժեր են արձանագրվել համայնքների զարգացման ծրագրերով նախատեսված աշխատանքների կատարման, ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրավական ակտերի ընդունման, կադրային գործի վարման և համայնքային ծառայության արդյունավետության բարձրացման, համայնքների ավագանիների լիազորությունների և համայնքների ղեկավարների սեփական ու պետության պատվիրակած լիազորությունների իրականացման ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել համայնքներում ՀՀ Ազգային ժողովի (2018 թվականի դեկտեմբերի 9) և տեղական ինքնակառավարման մարմինների հերթական (Լուսակերտ և Հովտաշեն) ընտրությունների նախապատրաստման և անցկացման հետ կապված գործընթացները ՀՀ ընտրական օրենսգրքի դրույթներին և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ժամանակացույցին համապատասխան կազմակերպելու ուղղությամբ:

Ամենօրյա աշխատանքներ են տարվել մարզի համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի բարելավման և համայնքային ծառայության ներդրման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

2018 թվականի նոյեմբերին կազմակերպվել և անցկացվել է մարզի համայնքների ղեկավարների ու ավագանիների անդամների, ինչպես նաև մարզի համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացը՝ 1-ական խմբերով: Վերապատրաստված թվով 24 համայնքների ղեկավարների ու ավագանու անդամների և 16 համայնքային ծառայողների տրվել են ավարտական վկայականներ:

2018 թվականի ընթացքում մարզի 28 համայնքներում համայնքների ղեկավարների կողմից թվով 133 համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման համար հայտարարվել են մրցույթներ: Մրցույթների հայտարարությունները տեղադրվել են www.azdarar.am կայքում, տպագրվել են մամուլում և փակցվել են համայնքների տեղեկատվական ցուցատախտակներին:

Ատեստավորվել են նաև մարզի համայնքապետարանների աշխատակազմերի ատեստավորման ենթակա թվով 75 համայնքային ծառայողներ:

Վարչության կողմից պատշաճ կարգով վարվում է նաև մարզի համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական էլեկտրոնային գրանցամատյանը:

Աշխատանքներ են տարվել համայնքներում առկա համացանցային պաշտոնական կայքերի պատշաճ գործարկումը ապահովելու և դրանց միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը բարելավելու ուղղությամբ:

Ապահովվել է մարզի համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից ընդունված որոշումների տեղադրումը մարզպետարանի կայքում:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 22-ամյակի կապակցությամբ նոյեմբերի 10-ին կայացած մրցանակաբաշխությունում մրցանակների են արժանացել Գյումրի համայնքը՝ «Մշակութային լավագույն համայնք 2018», Արթիկ համայնքը՝ «Տարվա նախաձեռնություն 2018» և Ամասիա համայնքը՝ «Տարվա նշանակալից առաջընթաց 2018» անվանակարգերում:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել նաև պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու ուղղությամբ:

Մարզպետարանի, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ու պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների համագործակցված աշխատանքների արդյունքում ամբողջությամբ իրականացվել են մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլանով նախատեսված բոլոր միջոցառումները, ապահովվել է զորակոչային առաջադրանքների կատարումը:

Ճշգրտվել և թարմացվել են արտակարգ իրավիճակների, քաղաքացիական պաշտպանության, զորակոչի և զորահավաքի բնագավառներին առնչվող իրավական ակտերը:

Համապատասխան աշխատանքներ են տարվել Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի կազմակերպման, տարկետման նպատակով ներկայացված անձնական գործերի ուսումնասիրման, մարզային հանձնաժողովի նիստերի ժամանակ ընդունված որոշումների և եզրակացությունների նախագծերի կազմման և ՀՀ ՊՆ առաքման ուղղությամբ:

Վարչությունը պատշաճ կերպով մասնակցել է նաև սույն թվականի հոկտեմբերի -ին անցկացված «ՇԱՆԹ 2018» ռազմավարական հրամանատարաշտաբային ուսումնավարժանքին, անհրաժեշտության դեպքում մեթոդական աջակցություն է ցուցաբերվել նաև մարզպետարանի ստորաբաժանումներին և մարզի 5000-ից ավել բնակչություն ունեցող համայնքներին:

Արդյունավետ համագործակցություն է ապահովվել նաև Շիրակի կայազորի զորամասերի, մարզում տեղակայված ՌԴ սահմանապահ զորքերի և 102-րդ ռազմաբազայի հրամանատարության հետ, անցկացվել են մի շարք համատեղ միջոցառումներ:

ՀՀ պետական սահմանի պաշտպանությանը ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար մարզի սահմանամերձ համայնքների թվով 20 բնակիչներ և սահմանապահ զորամասի ծառայողներ ՀՀ Շիրակի մարզպետի կողմից պարգևատրվել են արժեքավոր նվերներով և շնորհակալագրերով

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՏԻ և ՀԳՄՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

23.12.2018թ.

<<Շիրակի>> ՁՕԸ-ի կողմից 2018 թվականին իրականացվել է հետևյալ աշխատանքները՝

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Չափի միավոր	Ընդամենը
1	Ոռոգման ցանցի մաքրում	հազ. խ.մ. հազ. դրամ	109.95 26 874.6
2	Ոռոգման ցանցի նորոգում	կմ հազ. դրամ	0.41 2903.2
3	Հիդրոտեխնիկական կառուցվածքների և ջրաչափական դիտակետերի նորոգում	հատ հազ. դրամ	86 4 350
4	Պոմպակայանների և խորքային հորերի նորոգում	հատ հազ. դրամ	14 4 771.7
5	Մեքենա-մեխանիզմների նորոգում	հատ հազ. դրամ	11 6 401.1
Ընդամենը		**հազ. դրամ**	**45 300.6**

Ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքներն իրականացվել են ժամանակին, ջրօգտագործողների հետ կնքվել են 4322 պայմանագիր 2786 հա ոռոգելու համար:

Օգտագործված ջրերի և գումարների հավաքագրումների օպերատիվ տվյալները 2018թ.
(ըստ <<Շիրակ>> ՁՕԸ-ի)

Հ/Հ	Ցուցանիշները	Քանակը	Չափի միավորը
1	Ջրառ	14143	հազ. մ3
2	Ջրտուք	6020	հազ. մ3

3	Հասույթ	66217.0	հազ. դրամ
4	Գանձում	67121.5	հազ. դրամ
5	Գանձման տոկոս	101	%

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մարգխորհրդի նիստ 26.12.2018թ.

2018 թվականի գյուղատնտեսական աշխատանքների և բերքահավաքի վերաբերյալ

2018թ. մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ տեսքը.

Հ/Հ	**Մշակաբույսի անվանումը**	**Ցանքատարածություն /հա/**		**Աճ կամ նվազում /հա/**
		2017թ.	**2018թ.**	
1.	Հացահատիկ	41997	35621	**-6376**
	այդ թվում՝ աշնանացան ցորեն	21730	18458	**-3272**
	գարնանացան գարի	20183	17018	**-3165**
2.	Կարտոֆիլ	3721	3221	**-500**
3.	Բանջարեղեն	1758	1451	**-307**
4.	Կերային մշակաբույսեր	12980	11686	**-1294**
5.	Տեխնիկական մշակաբույսեր	172	105	**-67**
Ընդամենը		**60630**	**52085**	**-8545**

2018թ. բերքի տակ կատարվել է 10 տ սուպեր էլիտային աշնանացան ցորենի սերմացուի ցանքեր: Գարնանացանի համար մարզին հատկացվել է 583.51 տ գարնանացան գարու, 147.3 տ կորնգանի, 3 տ առվույտի, 11.2 տ գարնանացան ցորենի և 0.56 տ եգիպտացորենի, 0.28 տ սիսեռի և 0.05 տ ոլոռի սերմացուներ:

Արձանագրվել է նոր մշակաբույսերի մշակության պրակտիկա՝ կտավատ 92 հա, ոլոռ 38 հա, սիսեռ 28 հա, ոսպ 47 հա, որոնց տնտեսական արդյունավետությունը մոտ 2-3 անգամ գերազանցում է հացահատիկային մշակաբույսերին:

Հիմնվել է ժամանակակից տեխնոլոգիաներով 7 հա ինտենսիվ այգի՝ Գյումրի և Կապս բնակավայրում, իսկ Ոսկեհասկ Գուսանագյուղ գյուղերում հիմնվել է 6 հա պտղատու այգի:

Հայկավանում փոքր ֆերմերների կենսապայմանների բարելավում՝ կարողությունների զարգացման և կայուն տնտեսական կառուցվածքների ստեղծման միջոցով հիմնվել են հակակարկտային ցանցերով և կաթիլային ոռոգման համակարգով հատապտղատու այգիներ և բանջարանոցներ:

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում նորոգվում է Անուշավան համայնքի ոռոգման համակարգի 800 մետր երկարությամբ հատված: Ոռոգման ինքնահոս փակ համակարգի պլաստիկ խողովակաշարով կառուցման աշխատանքների իրականացման համար նախատեսված է 18 մլն դրամ, որն հատկացնելու են համայնքն ու պետությունն համատեղ: Ոռոգման ցանցի հողային աշխատանքներն արդեն ավարտված են, փորված խրամատներում պլաստիկ խողովակներ են տեղադրվում, կատարվում են միացումներ: Աշխատանքների ընթացքին ծանոթացել են մարզպետարանի գյուղվարչության պատասխանատուները: Ծրագրի իրականացման արդյունքում 400 տնտեսություն կկարողանա ոռոգել հողերը, 50 հա-ով կավելանա ոռոգելի հողերի տարածքը:

ԵՄ PRDP մարզի Ամասիա համայնքում հիմնվել է դրդի վերամշակման արտադրամաս: Առաջնահերթ խնդիրների լուծման ծրագրում պետական բյուջեից տրամադրված միջոցներից 20 մլիլիոն 973հազար դրամ գումար է նախատեսվել Ամասիայի բրդի վերամշակման արտադրամասի հիմնանորոգման և որպես արտադրամաս հարմարեցնելու համար: Շուրջ 400 քառակուսի մետր մակերեսով շինության նորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են: Բրդի վերամշակման ծրագրի իրականացումը նպաստելու է Ամասիայում աշխատատեղերի ստեղծմանը, համայնքի 10 բնակավայրերում բրդի վերամշակման ողջ արժեշղթայի զարգացմանը: Նախատեսվում է կարպետագործության զարգացում, բրդյա արտադրանքի հետ կապված ծառայություններ մատուցող ՓՄՁ-ների գործունեության խթանում:

Հացահատիկի բերքահավաք և խոտհունձ.

Մշակաբույսը	**Ցանվել է /հա/**	**Միջին բերքը /g/**	**Համախառն բերքը /տ/**
աշնանացան ցորեն	18345	32.4	59192
գարնանացան հացահատիկ	16943	28.5	48383

Համախառն բերք.

Մշակաբույսը	**2017թ. /տոննա/**	**2018թ. /կանխատեսվող/ /տոննա/**
Հացահատիկ	77553	107575
Կարտոֆիլ	93342	69603
Բանջարեղեն	49053	31509

Հացահատիկի համախառն բերքի կանխատեսվող աճը պայմանավորված է 2018թ. հացահատիկի միջին բերքի բարձր ցուցանիշով, իսկ կարտոֆիլի և բանջարեղենի

համախառն բերքի կանխատեսվող նվազումը պայմանավորված է ցանքերի ֆիզիկական ծավալների կրճատումով:

Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծրագրերի շրջանակներում մարզում իրացվել է 2.4 տոննա ֆոսֆորական ու 2.2 տոննա կալիումական պարարտանյութեր և 276316 լիտր դիզելային վառելիք:

Մարզում գործում են թվով 89-ը հակակարկտային կայանք, որից 2-ը տեղադրվել է 2018թ. Լուսակերտ համայնքում: 2018թ. ընթացքում բնական աղետների հետևանքով տուժել են մարզի 38 համայնքների գյուղատնտեսական նշանակության շուրջ 5200 հա ցանքատարածություններ, վնասի չափը կազմել է մոտ 3.092 մլրդ դրամ: Վնասի գնահատման համապատասխան փաթեթները ամփոփվել և ներկայացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետարաններին գումար հատկացնելու և 2018 թվականին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցման գումարների չափը և տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 1405 - Ն որոշումով հաստատված կարգով 2018 թվականի տարերային աղետների հետևանքով մարզի 26 գյուղերի 50-100 % տուժած 3611 գյուղատնտեսական հողօգտագործողներին տրամադրվել է մասնակի փոխհատուցում, որի գումարը կազմում է 125.4 մլն դրամ:

2018թ. ընթացքում մարզի 31 համայնքներում կատարվել է 3200 գլուխ կովերի և էգ մոզիների սերմնավորման աշխատանքներ՝ հոլշտեյն, շվից, ջեզեյ (կաթնային ուղղությամբ), անգուստ (մսային), սիմենտալ (մսակաթնային) ցեղատեսակներով տեղական ցեղերը բարելավելու նպատակով: Մարզում ստուգվել է բրուցելյոզ հիվանդության նկատմամբ 96162 գլուխ խ.ե.կ., 38712 գլուխ մ.ե.կ. արյան նմուշ, դաբաղի նկատմամբ վակցինացվել է 284474 գլուխ խ.ե.կ. և 59885 մ.ե.կ.: Սիբիրախտի նկատմամբ վակցինացվել է 159796 գլուխ խ.ե.կ. և 177 ձի: Խշխշան պալար հիվանդության նկատմամբ վակցինացվել է 161821 կով:

Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության 2-րդ ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ է Աղվորիկ բնակավայրի արոտների ջրարբիացման համակարգի, փարախի և հովվի կացարանի կառուցման աշխատանքները՝ շուրջ 46 մլն դրամ:

2018թ. ընթացքում իրականացված գյուղատնտեսական ծրագրեր

- ***Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագիր*** (պայքարի միջոցառումներն իրականացվում են հիմք ընդունելով բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքները, 3.4 մլն դրամ, մարզի շուրջ 3574 հա վարելահողերի վրա մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների իրականացում):

- ***Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ*** (4.298 մլն դրամ, 420 հա վարելահողերի վրա ագրոքիմիական հետազոտություններ):

- ***Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր*** (2018թ. Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի Շիրակի մարզային կառույցում 775 անձանց համար անցկացվել է ուսուցում, որից հավաստագրվել են 768-ը):

- ***Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր*** (0.32 մլն դրամ, հայտ են ներկայացրել 3 շահառու, արդեն ձեռք է բերվել 1 միավոր տեխնիկա, ընթացքի մեջ են Ազատան և Մարմաշեն համայնքների շահառուների ձեռքբերումը):

- ***Գյուղատնտեսական նշանակության ոռոգելի հողերի ընդլայնում՝*** (Մարզի Հոռոմ համայնքում «Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման» ծրագրի շրջանակներում իրականացվել է ներհամայնքային ջրանցքի 6865 գծամետր բետոնային նորոգման աշխատանքներ որով հնարավորություն կստեղծվի նախկին 160 հա ոռոգելի տարածքը հասցնելու 455 հա-ի: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 322 մլն դրամ համայնքի կողմից ներդրումը 5% շուրջ 20 մլն դրամ):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2018Թ-Ի <<Գյումրիի սելեկցիոն կայան>> ՓԲԸ 2018թ.-ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՀԱՑԱՀԱՏԻԿ

- Աշնանացան ցորենի համախառն արտադրությունը կազմել է 510.710կգ, 1հա-ի միջին բերքատվությունը 45,2ցենտներ (ցանքատարածությունը՝ 113հա)
- Գարնանացան գարու համախառն արտադրությունը կազմել է 256.610 կգ, 1հա-ի միջին բերքատվությունը 34,6 ցենտներ (ցանքատարածությունը՝ 74,14հա)

2. ՀԱՏԻԿԱԲՆԴԵՂԵՆ

- 2. 1 Ոսպի արտադրությունը կազմել է 879կգ, 1հա-ի միջին բերքատվությունը 8,4 ցենտներ (1հա)
- Սիսեռի արտադրությունը կազմել է 3188 կգ, 1հա-ի միջին բերքատվությունը 4,36 ցենտներ (4,4հա)
- Լոբու արտադրությունը կազմել է 1787 կգ, 1հա-ի միջին բերքատվությունը 10,2 ցենտներ (1,75հա)

3. ԲԱԶՄԱՄՅԱ ԿԵՐԱՅԻՆ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐ

- Կորնգանու սերմ՝ (բունկերային՝ 11650կգ)
- Առվույտի սերմ (բունկերային 1310կգ)

4. ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԷԼԻՏԱ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԵՐՄԻ ԻՐԱՑՈՒՄ

- Աշնանացան ցորենի իրացումը կազմել է՝ 475.073 Կգ
- Գարնանացան գարու իրացումը կազմել է՝ 179.915 Կգ

5. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ 2019թ. ԲԵՐՔԻ ՏԱԿ

- Կատարվել է աշնանացան ցորենի՝ 64 հա սուպեր էլիտային, 27. 5 հա էլիտային և 8. 5 հա բազմացման տնկարանի ցանքեր

6. ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ

- Սույն թվականին ընկերությունը ֆինանսական վարձակալությամբ ձեռք է բերել Բելառուս 1221. 2 մակնիշի անիվավոր տրակտոր, և PLH -5-35P-2 մակնիշի գութան

- ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
- /2017-2018 և 2018-2019 ուսումնական տարվա համեմատական/

- **ՀՀ Շիրակի մարզում գործող հանրակրթական դպրոցներ**

01.09.2017թ. ընդամենը – 169 դպրոց
01.09.2018թ. ընդամենը – 164 դպրոց

- **ՀՀ Շիրակի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտներ**

01.09.2017թ. ընդամենը – 30387, որից		
Մարզ.ենթակայության	ԿԳ նախարարության ենթակայության	Ոչ պետական
26049	3979	359
01.09.2018թ. ընդամենը – 31086, որից		
Մարզ.ենթակայության	ԿԳ նախարարության ենթակայության	Ոչ պետական
26743	4019	324

- **ՀՀ Շիրակի մարզի հանրակրթական դպրոցների առաջին դասարանցիների թիվ**

01.09.2017թ.. ընդամենը – 3070 աշակերտ
01.09.2018թ. ընդամենը -3072 աշակերտ

- **ՀՀ Շիրակի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտների թիվ**

01.09.2017թ. ընդամենը - 852 աշակերտ
01.09.2018թ. ընդամենը - 1723 աշակերտ

- **ՀՀ Շիրակի մարզի ներառական կրթություն իրականացնող դպրոցներ**

01.09.2017թ. դպրոց/աշակերտ -28*1410
01.09.2018թ. դպրոց/աշակերտ-28*1307

- **ՀՀ Շիրակի մարզի դպրոցահեն նախակրթարաններ**

Նախակրթարանի տիպը	01.09.2017թ.		01.09.2018թ.	
	Նախակրթարանների թիվը	Սաների թիվը	Նախակրթարանների թիվը	Սաների թիվը
Դպրոցահեն	62	1040	62	964

- **ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության դպրոցներում ուսուցիչների թիվ**

01.09.2017թ. դպրոց/աշակերտ -3106
01.09.2018թ. դպրոց/աշակերտ-3132

- **Դպրոցականների առարկայական օլիմպիադաների վերաբերյալ տեղեկատվություն**

2018թ.	6200աշ.
Գովասանագիր	28
1-ին կարգ	4
2-րդ կարգ	4
3-րդ կարգ	13
Միջազգային օլիմպ. մասն.	1

- **68 համայնքային դպրոցները գազաֆիկացված չեն, ջեռուցվում են՝ դիզ վառելիքով և էլեկտրաէներգիայով:**

- **<u>Մշակույթ</u>**

- ՀՀ Շիրակի մարզում գործում է 152 մշակութային կազմակերպություն, որից
- **.** Հանրապետական ենթակայության 12
- **.** Մարզային ենթակայության 5
- **.** Ոչ պետական՝ /համայնքային, հասարակական , բարեգործական, ՍՊԸ-ներ / 135
- Պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացմանը ծրագրով նախատեսված 3230,4 հազ. դրամ միջոցների հաշվին 2018 թվականի ընթացքում մարզում անց են կացվել թվով հինգ մշակութային միջոցառումներ՝ ուղղված ազգային և պետական տոների արժևորման գործընթացին՝
- Բանակի օր
- Մայիսյան հաղթանակներ-առաջին հանրապետության օր՝ նվիրված Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին
- Մինասի գույներով երիտասարդ նկարիչների 7-րդ պլեներ՝ նվիրված Մինաս Ավետիսյանի 90- ամյակին
- Անկախության օր
- Հոգևոր երգերի մարզային 5-րդ փառատոն՝ նվիրված 1988-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի 30-ամյա տարելիցին,
- 2018 թվականի ընթացքում մարզում անց են կացվել ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվող մշակութային ծրագրերը՝
- Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ ավանդական հանրապետական փառատոն

- Գյումրու օր տոնակատարության շրջանակում Գյումրիում Հացի փառատոն ծրագրի իրականացում
- Երաժշտական ու արվեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսուցում ծրագրի իրականացում
- Թանգարանային գիշեր ակցիայի շրջանակներում թանգարանների անվճար այցելություն բոլոր այցելուների համար
- Վերածնունդ պատանի երաժիշտ կատարողների միջազգային մրցույթ-փառատոն
- Ռոլան մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոնի շրջանակում ֆիլմերի ցուցադրություններ
- Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերում

Տեղեկատվություն
ՀՀ Շիրակի մարզի առողջապահության ոլորտի վերաբերյալ

Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գործում են թվով 32 առողջապահական կազմակերպություններ, որոնցից 10-ը իրականացնում են հիվանդանոցային ծառայություններ, 19-ը ամբուլատոր պոլիկլինիկական: Մարզում գործում է նաև արյան փոխներարկման կայան, շտապ բուժական օգնության կայան, պաթոլոգանատոմիական լաբորատորիա:

Մարզպետարանի ենթակայությամբ գործող բուժհաստատություններում ծավալված է 576 մահճակալ: Մարզի բուժհաստատություններում աշխատում են 470 բժիշկ, 1125 բուժքույր:

2018 թվականին մարզի բուժաստատություններին տրամադրված պետական պատվերի բյուջեն կազմել է 3.938.135.6 հազ.դրամ, 2017 թվականին՝ 4.016.618.4 հազ.դրամ: 2018 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ վճարովի ծառայությունների դիմաց ստացված եկամուտների գումարը կազմել է 802.813.5 հազ.դրամ, 2017 թվականին ամբողջ տարվա կտրվածքով ՝ 626.472.2 հազ.դրամ:

2018թվականի նոյեմբերի 20-ի դրությամբ մարզի բժշկական կազմակերպությունների դեբիտորական պարտքը կազմում է 240.331.9 հազ.դրամ, իսկ կրեդիտորական պարտքը՝ 425.209.6 հազ.դրամ:

Դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզում գրանցվել է 2809 ծնունդ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է 2937 ծնունդ:

2018թ. ընթացքում «Գանձաղբյուր» առողջարանի ուղեգիր է տրամադրվել մարզի 24 հաշմանդամի: 8 երեխայի տրամադրվել է «Ջերմուկ-Արարատ» առողջարանի ուղեգիր:

2018 թվականին ՀՀ Շիրակի մարզպետի միջնորդությամբ սոցիալական անապահով պայմաններում գտնվող, սակայն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված թվով 123 քաղաքացի մարզում գործող ուղեգրող հանձնաժողովների կողմից տրամադրված ուղեգրերով ստացել է անվճար բժշկական օգնություն և անցել է բժշկական հետազոտություն::

Հագեցվել է մարզի շտապ բուժօգնության ծառայությունը: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը անհատույց տրամադրված շտապ բժշկական օգնության ռեանիմոբիլներից և գծային մեքենաներից մարզի շտապ բուժօգնության ծառայություն մատուցող բուժհաստատություններին տրամադրվել է շտապ օգնության 10 գծային մեքենա և 4 ռեանիմոբիլ:

ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի **«Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետարաններին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N:1717-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»** N:1073-Ն որոշմամբ առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար «Գյումրու մոր ու մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ին հատկացվել է 19.2 մլն. դրամ՝ կտուրի վերանորոգման համար, «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ին՝ 24 մլն դրամ՝ ընթացիկ վերանորոգման համար և «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ 24 մլն դրամ՝ ընթացիկ վերանորոգման համար:

Սոցիալապես անապահով 7 բժիշկի և 10 բուժքույրի համար կազմակերպվել է վերապատրաստման անվճար դասընթաց:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում հայկական ակնաբուժական նախագիծ ծրագրով բացվեց ժամանակակից հետազոտական ու վիրաբուժական սարքավորումներով հագեցած Օհաննես Ջոն Խաչիկյանի անվան Գյումրիի մարզային ակնաբուժական կենտրոնը:

Կատարված աշխատանքներին զուգահեռ այսօր մարզում առկա են դեռևս լուծում պահանջող մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ հրատապ են «Ախուրյանի բժշկական կենտրոն», «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա», «Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունների շենքերի վերանորոգման հարցը, առողջապահական կազմակերպությունները ժամանակակից բժշկական սարքավորումներով հագեցնելու հարցը:

Նշված խնդիրների լուծումը կնպաստի առողջապահական համակարգի զարգացմանը, մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարելավմանը, մատչելիության և հասանելիության ապահովմանը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Համաձայն ՀՀ Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության 2018 թվականին աջակցություն է ցուցաբերվել արտահանման ներուժ և ներդրումների կարիք ունեցող ՓՄՁ սուբյեկտներին, ՓՄՁ աջակցության գործող կառույցներին, որը նպաստել է նոր ստեղծված և գործող կազմակերպությունների աճին, աշխատատեղերի ստեղծմանը և գործող աշխատատեղերի պահպանման միջոցով մարզում գործազրկության մակարդակի կրճատմանը, ապահովվել է թողարկված արտադրանքի ծավալների աճ, ներդրումային ռիսկի նվազեցում և արտերկրների հետ տնտեսական համագործակցության կազմակերպմանը:

ՀՀ Շիրակի մարզում 2018 թվականի գործունեության ծրագրով ստեղծվել է ոչ գյուղատնտեսական 852 նոր աշխատատեղ:

Մարզի վարչական տարածքում կատարվելիք կապիտալ ներդրումները (ոչ գյուղատնտեսական) հասցվել են մինչև 28.8 մլրդ դրամի, իսկ մեկ շնչի հաշվով ներդրումների ծավալը՝ մինչև 120.3 հազ. դրամի:

2018 թվականին անցկացվել է «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ» առաջին բիզնես ֆորումը, որի նպատակն է տնտեսության տարբեր ոլորտներում ծանոթանալ մարզի գործարար միջավայրին, հավաքագրել և համակարգել առկա գործարար տեղեկատվությունը, այն ներկայացնել Ռուսաստանի Դաշնության տարբեր մարզերի վարչական կառույցներին և գործարարներին՝ հետագա հնարավոր համագործակցության ուղիներ փնտրելու, երկկողմանի կապեր հաստատելու և համատեղ գործունեություն ծավալելու համար՝ խթանելով պետական համակարգում և տնտեսության տարբեր ոլորտներում ներդրումները:

2018 թվականին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել 26 ներդրումային ծրագիր-առաջարկ:

Տարածաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան գործունեության ծրագրի շրջանակներում մասնավոր ներդրողների խրախուսման գործում համագործակցում ենք Շիրակի արդյունաբերության պալատի և Շիրակի մարզային ՓՄՁ ԶԱԿ-ի հետ:

Համայնքների կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ընթացքը:

Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու համար ներկայացված 19 ծրագրային հայտերից գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած 11 սուբվենցիոն ծրագրերից, որը կազմում է 483.5 մլն դրամ, որից պետության համամասնությունը կազմում է 192.2 մլն դրամ ութ ծրագրային հայտեր արդեն իսկ ավարտված են, որը կազմում է 319.7 մլն դրամ, որից պետության համամասնությունը կազմում է 137.2 մլն դրամ:

1. Ազատան համայնքի կենտրոնական թիվ 1 փողոցի հիմնանորոգման մայթերի նորոգման և երկրորդական փողոցների խճապատման աշխատանքներ,
2. Ախուրյան համայնքի Նոր Ախուրյան թաղամասի ճանապարհի շարունակության 1314մ հատվածի ասֆալտապատում,
3. Աշոցք համայնքի Փոքր Սեպասար-Մ1 ճանապարհահատվածի կոպճապատման աշխատանքներ,
4. Առափի համայնքի ներհամայնքային թիվ 1 ճանապարհի 1,2 կմ հատվածի և համայնքի կենտրոնի ասֆալտապատում,
5. Անուշավան համայնքի ներհամայնքային թիվ 13,14,24,25,29 փողոցների բազալտե խճով կառուցման աշխատանքներ:
6. Գյումրի քաղաքի կոմունալ ծառայության և աղբահանության ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում,
7. Անի համայնքի սահմանամերձ և լեռնային 10 բնակավայրի գիշերային լուսավորման ցանցի անցկացման աշխատանքներ:
8. Անուշավան համայնքի ոռոգման ինքնահոս փակ համակարգի պլաստիկ խողովակաշարով կառուցման ծրագիրը:

Երեք ծրագրային հայտեր ՀՀ կառավարության որոշումներով հաստատվել են համաֆինանսավորման տրամադրման համար, սակայն եղանակների և այլ պատճառներով հնարավոր չէ մինչև տարեվերջ ավարտել:

1. Գյումրի քաղաքի Մուշ 2/2 թաղամասի հրապարակի կազմակերպում և բարեկարգում (աշխատանքների 80%-ը կատարված է),
2. Ախուրյան համայնքի Կամո բնակավայրում համայնքային կենտրոնի, մանկապարտեզի կառուցում (աշխատանքների 20%-ը կատարված է),
3. Սարապատ համանքի սերմազտման, ախտահանման, մանրացնող և բարձիչ սարքավորումների ձեռք բերում (2018 թվականի նոյեմբերի 7-ին հավանության է արժանացել և 2018 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից առաջարկվել է Սարապատ համայնքի ղեկավարին օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել ծրագրի իրականացման մրցույթ, որը գտնվում է ընթացքի մեջ):

Միջազգային ծրագրեր

ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից 2018 թվականին իրականացվել են հետևյալ ոլորտային ծրագրերը՝ հնդկացորենի վերամշակման գործարանի հիմնում (Բավրա բնակավայր), բարձրարժեք պանրի արտադրություն (Հայկական և Մեծ Մանթաշ) և չրի և խոտաբույսերի արտադրություն (Արևշատ):

Համատեղ Եվրոմիության հայաստանյան պատվիրակություն, Մարդը կարիքի մեջ ՀԿ, Ամասիա համայնք, ՀՀ կառավարության աջակցությամբ հիմնվում է Շիրակի մարզի Ամասիա համայնքում բրդի վերամշակման արտադրամաս:

2018թվականին Ֆրանկոֆոնիայի ավանում ՀՀ Շիրակի մարզը ներկայացված է եղել իրեն բնութագրող ավանդույթների մասին պատմող, քաղաքային կենցաղին ու արհեստներին բնորոշ ցուցանմուշներ՝ գյումրեցուն հատուկ ֆայտոնը, մուշուրբեն և ըստ արժանվույն ներկայանալու և կազմակերպչական աշխատանքներին ցուցաբերած աջակցության համար ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Զբոսաշրջության կոմիտեի կողմից պարգևատրվեց շնորհակալագրով:

2018 թվականին անցկացվեց «Եվրասիական Շաբաթ»-ը Եվրասիական տնտեսական միության ամենամյա գործնական միջոցառում, որը արդյունավետ երկխոսության հարթակ է Եվրասիական տնտեսական միության ստեղծած բիզնեսի զարգացման, գործիքների քննարկման: ՀՀ Շիրակի մարզի գործարարներին հնարավորություն ընձեռնվեց ներկայացնելու իրենց կողմից թողարկված արտադրանքը և մատուցվող ծառայությունները:

Չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական, համայնքային և մասնավոր գույքերի արդյունավետ կառավարման համար 2018 թվականին կազմվել է գույքացանկի 90%-ը և կազմակերպվել են 5 հանդիպումներ ներդրողների հետ:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզում զբոսաշրջության զարգացումն ունի մեծ հեռանկար, քանի որ մարզում առկա է զբոսաշրջության հիմնական ճյուղերի՝ համակարգված և փոխլրացնող զարգացման համար անհրաժեշտ և մեծածավալ ներուժ: Մարզը կարող է հետաքրքիր լինել ինչպես ներգնա, այնպես էլ՝ ներքին զբոսաշրջության զարգացման համար:

Քանի որ զբոսաշրջության զարգացումը հանդիսանում է ՀՀ Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության գերակա խնդիրներից մեկը, ուստի ՀՀ Շիրակի մարզպետարանը նախաձեռնել և մշակել է **ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգը**, որի նպատակն է համակարգված ձևով ներկայացնել ՀՀ Շիրակի մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունները, մարզի առավելություններն ու ներուժը, բացահայտել և նկարագրել այն զբոսաշրջային ուղղությունները, որոնք կարող են շոգեքարշի դեր կատարել ոլորտի զարգացման համար: Հայեցակարգը նպատակ ունի նաև բացահայտել զբոսաշրջության բնագավառում առկա հիմնախնդիրները և նշագծել մարզում դրանց լուծման ուղիները, որը իր մեջ ներառում է Շիրակի մարզի զբոսաշրջային ոլորտի առկա վիճակի ամփոփ վերլուծությունը:

Բաժնի կողմից 2018 թվականին մշակվել է մարզի զբոսաշրջային երթուղիների էլեկտրոնային քարտեզը:

Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացման ծրագրի շնորհիվ մշակվել է Շիրակի մարզի հետաքրքիր կենցաղավարությամբ ապրող մարդկանց էլեկտրոնային քարտեզը:

2018 թվականին մասնակցել ենք հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովին, որի շրջանակներում ներկայացրել ենք ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգը, մարզի զբոսաշրջային հնարավորությունները (30 զբոսաշրջային վայրեր) և զբոսաշրջության զարգացմանը նպաստող ծրագրերը:

Ուսումնասիրվել և վերլուծվել են ՀՀ Շիրակի մարզ այցելած զբոսաշրջիկների տեսակարար կշիռը և զբոսաշրջիկների քանակը (40263):

Կազմակերպվում են զբոսաշրջության զարգացման ուղղված հանդիպումներ մարզի զբոսաշրջային ընկերությունների հետ:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնլ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ «ԵՄ հանուն մշակույթի, առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» եռամյա ծրագրի շրջանակներում Արփի համայնքում իրականացվում են զբոսաշրջության զարգացման ուղղված ծրագրեր:

Շիրակի մարզպետարանը՝ ի դեմս մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի, «ԱՌՏ» երիտասարդական, բնապահպանական և խորհրդատվական հասարակական կազմակերպության ու Գյումրի տուր տուրիստական ընկերությունների կողմից ճանաչվել է «Տարվա լավագույն գործընկեր»

2018 թվականին պետության, մասնավոր հատվածի, համայնքի և միջազգային կազմակերպությունների կողմից զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղությամբ իրականացվել է շուրջ 686 մլն դրամի ներդրումներ:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Կ.ԲԱԴԻՇՅԱՆ

ՀՀ Շիրակի մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը համարում է գերակա ուղղություններից մեկը: Այս շրջանակներում իրականացվել են տարբեր ծրագրեր, որոնք մեծապես նպաստել են ոլորտի ընդհանուր զարգացմանը: Գործում են շուրջ 30 ՏՀՏ ընկերություններ, որոնք ունեն լաբորատորիաներ, կրթական կենտրոններ, բիզնես ենթակառուցվածքներ: Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանի և ԳՏՏԿ-ի, ԵՄ-ի և ՀՀ ՏԿԶՆ-ի ֆինանսավորմամբ իրականացվում են Շիրակի մարզում տեղեկատվական տեխնոլոգիաներով զբաղվող ընկերությունների զարգացմանն ուղղված ծրագրեր: Խթանել տեխնոլոգիական զարգացումը ՀՀ Շիրակի մարզում ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 200 ավելի երիտասարդներ և հզորացնել ՏՏ ընկերությունների կարողությունները՝ տրամադրելով դրամական և բիզնես զարգացման աջակցություն՝ 2018 թվականին կատարվել է 274.3 մլն դրամի ներդրում ստեղծելով 46 նոր աշխատատեղեր: Սիմոնյան կրթական հիմնադրանը շարունակվում է «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի կառուցումը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԱԾ ՈՒՂՈՐՏՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<u>Իրավական և մասնագիտական հսկողություն</u>

Մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու 2018 թվականի աշխատանքային ծրագրի և ՀՀ Շիրակի մարզպետի

համապատասխան որոշումների համաձայն 2018 թվականին նախատեսված ՀՀ Շիրակի մարզի թվով 14 համայնքներից նույնքանում իրականացվել են հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն:

Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել են համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման, օգտագործման տրամադրման, հողային ֆոնդի նպատակային օգտագործման և վարձավճարների գանձման օրինականությունը, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանումը:

Վերահսկողության արդյունքում կազմվել են 14 արձանագրություններ, որոնք համայնքների ղեկավարների կողմից ընդունվել են ամբողջությամբ և վերահսկողություն իրականացրած պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Իրավական և մասնագիտական հսկողություն արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները քննարկվել են համապատասխան համայնքների ավագանիների նիստերում և արված միջնորդությունների և համայնքների ղեկավարներին տրված պատադիր կատարման ցուցումներին համապատասխան նախատեսված ժամկետներում վերացվել են արձանագրված թերություններն ու խախտումները:

<u>Համայնքների տեղական ինանակառավարման մարմինների որոշումների իրավաչափության ուսումնասիրություններ</u>

Հաշվետու տարում, սահմանված կարգով ուսումնասիրվել են մարզպետարան ստացված հողային հարաբերությունների բնագավառին վերաբերվող մարզի 42 համայնքների ավագանիների թվով 223 և համայնքների ղեկավարների 178 որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, որոնց արդյունքում թվով 74 ավագանու և 48 համայնքի ղեկավարի ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են առարկություններ (տեսակարար կշիռը՝ 30.4 %) և համապատասխան առաջարկություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին:

Ներկայացված առարկությունները քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, դրանք ընդունվել են ամբողջությամբ և իրավական ակտերը համապատասխանեցվել են ՀՀ հողային օրենսդրության պահանջներին:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում, նախորդ տարվա համեմատությամբ էականորեն նվազել են մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված ոչ իրավաչափ որոշումների տեսակարար կշիռը:

<u>Հողերի օտարում, վարձակալության տրամադրում</u>

2018 թվականի ընթացքում մարզի թվով 15 համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում օտարվել է ընդամենը 28.17 հա համայնքային սեփականություն հանդիսացող հող, որը նախորդ տարվա համեմատությամբ պակաս է 49.31 հեկտարով: Վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է 91 մլն 196 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 16 մլն 728 հազ. դրամով: Ապահովվել է ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի նկատմամբ բարձր մակարդակ: Իսկ ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, օտարվել է 3.11 հա հող՝ 22 մլն 619 հազ. դրամ արժեքով:

2018 թվականին մարզի թվով 15 համայնքներում անցկացված հողերի վարձակալության տրամադրման մրցույթների արդյունքում վարձակալության է տրամադրվել 978.71 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողեր՝ 6 մլն. 170 հազ. դրամ վարձավճարով: Ապահովել է օգտագործման տրամադրված հողամասերի հողի հարկի դրույքաչափի նկատմամբ վարձավճարի բարձր մակարդակ:

Ապահովել է օտարված և վարձակալության տրամադրված հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցումները:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ

2018 թվականի ընթացքում հաստատված գլխավոր հատակագիծ չունեցող մարզի համայնքների կողմից սահմանված կարգով կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետարան են ներկայացվել համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու նպատակով կազմված 19 ժամանակավոր սխեմաներ և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործեր, որոնք քննարկվել են **հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողովի** համապատասխան նիստերում և դրական եզրակացություններով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու նպատակով կազմված և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացված նշված 29 հողաշինարարական գործերից **16-ի** վերաբերյալ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրվել են դրական եզրակացություններ, իսկ **3**-ի համաձայնեցման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից դրական եզրակացություններ տրված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները սահմանված կարգով քննարկվել են համայնքների ավագանիների նիստերում, հաստատվել են համապատասխան որոշումներով և ընթացք են տրվել կառուցապատման իրավունքների, ինքնակամ շինությունների օրինականացման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործառույթներին :

2018 թվականի ընթացքում մարզպետարանի կողմից Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողով ներկայացված հողաշինարարական գործերի վերաբերյալ բացասական կարծիք կամ եզրակացություն չի ստացվել**:**

Հողային հաշվեկշիռ

Մարզի համայնքների ղեկավարների կողմից կազմվել են համայնքների 2018 թվականի հողային հաշվեկշիռները, դրանք համաձայնեցվել են համայնքի ավագանու և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման հետ և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ Շիրակի մարզպետարան:

Սահմանված կարգով ամփոփվել են համայնքների ղեկավարների կողմից ներկայացրած հողային հաշվեկշիռները, կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Համաձայն մարզի 2018 թվականի հողային հաշվեկշռի մարզի վարչական տարածքը կազմում է **268027.0** հա, իսկ մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են **210881.8** հա, որի կազմը նախորդ տարվա համեմատությամբ էական փոփոխությունների չի ենթարկվել:

Գյուղատնտեսական նշանակության հողերը ըստ հողատեսքերի ունեն հետևյալ բաշխվածությունը՝

- վարելահողեր՝ **78151.61** հա (տեսակարար կշիռը՝ **37.06 %**),
- բազմամյա տնկարքներ՝ **47.03** հա (տեսակարար կշիռը՝ **0.02** %),
- խոտհարքներ՝ **9697.7** հա (տեսակարար կշիռը՝ **4.6** %),
- արոտներ՝ **112080.34** հա, (տեսակարար կշիռը՝ **53.14** %),

- այլ հողատեսքեր՝ **10905.09** հա (տեսակարար կշիռը՝ **5.17** %):

<u>Հողերի օգտագործում</u>

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են **111926.9** հա, որի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի կազմում՝ **53.07** % է, որից

- վարելահողեր՝ **16643.97** հա (**14.87 %),**
- բազմամյա տնկարքներ՝ **41.8** հա (**0.04 %),**
- խոտհարքներ՝ **4205.42** հա (**3.75 %),**
- արոտներ՝ **84918.65** հա, (**75.87 %),**
- այլ հողատեսքեր՝ **6117.02** հա (**5.46 %):**

Պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են՝ **36381.72** հա, որի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի կազմում՝ **17.25 %** է, որոնք ամբողջությամբ ընդգրկված են մարզի համայնքների վարչական տարածքներում և ունեն հետևյալ հողատեսքերը՝

- վարելահողեր՝ **1790.14** հա (**4.92 %),**,
- բազմամյա տնկարքներ՝ **0.0** հա (**0.0 %),**
- խոտհարքներ՝ **2886.63** հա (**7.93 %),**
- արոտներ՝ **26953.97** հա (**74.09 %),**
- այլ հողատեսքեր՝ **4750.98** հա (**13.06 %):**

Մարզի համայնքների վարչական տարածքներում առկա և վաճրակալության ենթակա համայնքային և պետական սեփականության **137398.8** հա գյուղատնտեսական նշանակության հողերից (առանց այլ հողատեսքերի) 2018 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ վարձակալության իրավունքով օգտագործման է տրամադրված **48026.5** հա (**34.9%)՝ 298 մլն. 286 հազ. դրամ** տարեկան վարձավճարով: Վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության 1 հա հողամասի միջին վարձավճարը մարզում կազմում է **6450** դրամ: 2017 թվականի համեմատությամբ վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողերը ավելացել են **707.9** հեկտարով:

2018 թվականի դեկտեմբերի 17-ի դրությամբ մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումն ունի հետևյալ տեսքը՝

	Հողատեսքը	Ըստ հողային հաշվեկշռի (հա)	Համայնքային և պետական սեփականության հողեր			Համեմատությունը 2017 թ. նկատմամբ	
			Տրամադրված է օգտագործման (հա)	Տեսակարար կշիռը հողերի կազմում (%)	Տրամադրված չէ օգտագործման (հա)	2017թ. տրամադրված օգտագործման (հա)	Տարբերությունը (-, +)
1	Վարելահող	18434.1	12436.2	67.5	5997.9	12255.9	+180.3
2	Խոտհարք	7092.1	4166.83	58.7	2925.27	4154.53	+12.3
3	Արոտ	111872.6	31423.45	28.09	80449.15	30908.15	+515.3

Ընդամենը մարզում	**137398.8**	**48026.5**	**34.9**	**89372.3**	**47318.6**	**+707.9**

Համայնքային սեփականություն

	Հողատեսքը	**Ըստ հողային հաշվեկշռի (հա)**	**Համայնքային սեփականության հողեր**		
			Տրամադրված է օգտագործման (հա)	**Տեսակարար կշիռը հողերի կազմում (%)**	**Տրամադրված չէ օգտագործման (հա)**
1	**Վարելահող**	**16644.0**	**11621.4**	**69.8**	**5022.6**
2	**Խոտհարք**	**4205.4**	**2275.02**	**54.1**	**1930.4**
3	**Արոտ**	**84918.7**	**17138.95**	**20.2**	**67779.7**
Ընդամենը մարզում		**105768.1**	**31035.4**	**29.3**	**74732.7**

Պետական սեփականություն

	Հողատեսքը	**Ըստ հողային հաշվեկշռի (հա)**	**Պետական սեփականության հողեր**		
			Տրամադրված է օգտագործման (հա)	**Տեսակարար կշիռը հողերի կազմում (%)**	**Տրամադրված չէ օգտագործման (հա)**
1	**Վարելահող**	**1790.1**	**814.8**	**45.5**	**975.3**
2	**Խոտհարք**	**2886.6**	**1816.1**	**62.9**	**1070.5**
3	**Արոտ**	**26954.0**	**14284.5**	**53**	**12669.5**
Ընդամենը մարզում		**31630.7**	**16915.4**	**53.5**	**14715.3**

<u>Հողի և գույքի վարձակալական վճարների հավաքագրում</u>

Մարզպետարանի աշխատանքային խմբերի կողմից ամենօրյա աշխատանքներ են տարվել մարզի համայնքների բյուջեներին ամրագրված հողի և գույքի վարձակալական վճարների հավաքագրումն ապահովելու ուղղությամբ: 2018 թվականին մարզի համայնքների բյուջեների եկամուտներում նախատեսված 359 540.6 հազ. դրամ հողի և գույքի վաձակալական վճարների դիմաց 2018 թվականի դեկտեմբերի 17-ի դրությամբ փաստացի հավաքագրվել է 287 379.6 հազ. դրամ (հավաքագրման մակարդակը՝ 79.9%): Նախորդ տարվա փաստացի հավաքագրվածի համեմատությամբ 2018 թվականին պակաս է հավաքագրվել 30131.4 հազ. դրամ վարձավճար: Հողի և գույքի վարձակալական վճարների հավաքագրումն գործում առանձնապես բարձր ցուցանիշներ են ապահովել Հայրենյաց (129.7 %), Նահապետավան (106.0 %), Անուշավան (98.1 %) համայնքները: Իսկ ամենացածր ցուցանիշներ արձանագրվել են Երազգավորս (30.3 %), Գեղանիստ (34.7 %) և Բայանդուր (41.3 %) համայնքներում: Նախորդ տարվա համեմատությամբ խիստ ցածր են Մարմաշեն (60.4 %), Ախուրյան (61.7 %), Սարապատ (68.4 %), Ամասիա (70.6 %), Անի (72.8 %), Աշոցք (73.0 %) խոշորացված համայնքների ցուցանիշները: Գույքի վարձակալության մասով միայն Ախուրյանի տարածաշրջանում նախատեսվածից պակաս է հավաքրվել շուրջ 26 մլն դրամ վարձավճար:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև

հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը համայնքների բյուջեներին կարող ապահովել լրացուցիչ եկամուտներ և լուծել համայնքների զարգացման հնգամյա ծրագրերով նախատեսված շատ խնդիրներ:

Լրացուցիչ եկամուտներ կարող են ապահովել նաև մասնավորեցված գյուղատնտեսական և այլ նշանակության շենքերի ու շինությունների պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասերի հողօգտագործման հիմքերը վերականգնելու, այդ իրավունքները պետական գրանցման ենթարկելու և համայնքների վարչական տարածքներում առկա ինքնակամ շինություններն օրինականացնելու արդյունքում:

2018 թվականի ընթացքում ԸԿԵԻՊ բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը 2018 թվականին իրականացրել է բաժնի կանոնադրական խնդիրներից բխող բազմաթիվ գործառույթներ՝ գերակայություն տալով ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններին, երեխաների պաշտպանության 2017-2021թթ ազգային ռազմավարությունից բխող միջոցառումներին. ռազմավարությունը ենթադրում է երեխաների իրավունքների պաշտպանություն՝ իրավունքների 3 փոխկապակցված և անբաժանելի խմբով՝ պաշտպանություն, ծառայություններ, մասնակցային իրավունք՝ երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կառույցների փոխհամագործակցության արդյունքում:

Բաժինը, որպես եռաստիճան համակարգի երկրորդ մակարդակ, զուգահեռաբար աշխատում է ԽՀՀ-ների և ազգային հանձնաժողովի հետ: Բոլոր աշխատանքների հիմքը կանխարգելումն է, իրազեկումը, տեղեկատվության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը ու իրականացումը՝ ուղղված խոցելի խմբերում գտնվող անձանց, ընտանիքների և երեխաների՝ կյանքի դժվարին իրավիճակներում չհայտնվելուն: Այսպես՝ երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի ամենակարևոր օղակը, սկիզբը և օրենսդրական լայն լիազորություններ ունեցող կառույցը խնամակալության և հոգաբարձության մարմինն է՝ որը աշխատանքները կազմակերպում և իրականացնում է իրեն կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի միջոցով: Քաջ գիտակցելով հանձնաժողովի դերն ու առաքելությունը՝ բաժինը սերտորեն համագործակցում է հանձնաժողովների հետ, ցուցաբերում անհրաժեշտ մեթոդական աջակցություն: Այսպես՝ 2018 թվականի ընթացքում բաժնի մասնագետները մասնակցել են բարդ և խնդրահարույց 59 դեպքի քննարկման: Այցելել մարզի 16 համայնք, մասնակցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների 26 նիստի:

Երեխաների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող դրույթը՝ կազմակերպել երեխայի խնամքը ընտանիքակենտրոն, ընտանիքահեն մոդելներով, իրականացնելու նպատակով՝ բաժնի կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ թիվ 1 գիշերօթիկ խնամքի հաստատությունը վերակազմակերպել երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի՝ 3 համայնքային մասնաճյուղերով՝ Անի, Արթիկ, Ախուրյան: Բաժնի առաջարկությամբ «Թռչունյան տուն» հաստատությունում իրականացվել է համապարփակ մոնիթորինգ:

2018 թվականին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություն է տեղավորվել 7 երեխա, գիշերօթիկ խնամքի հաստատություն՝ 12: Հաստատություններից ընտանիք է վերադարձել 28 երեխա, 5-ը՝ հաստատությունների բեռնաթափում ծրագրով: ՀՀ կառավարության և «Առավոտ» ԲՀԿ-ի կողմից իրականացվող այս և երեխաների մուտքի կանխարգելումը հաստատություններ ծրագրերով կանխարգելվել է նաև 55 երեխայի մուտքը հաստատություն: Եվ ընդունվող, և դուրս գրվող երեխաների ընտանիքներում մեր բաժնի անմիջական մասնակցությամբ

կատարվել են խորքային ուսումնասիրություններ, կարիքների գնահատում, կազմվել են անհատական սոցիալ-վերականգնողական ծրագրեր:

Ավելացել է ցերեկային խնամքի կենտրոնների և այդ կենտրոնների ծառայություններից օգտվող երեխաների թիվը: 2018 թվականին այդ կենտրոններում տարաբնույթ աջակցություն է ստանում 442 երեխա, նախորդ տարվա 382-ի փոխարեն: Բոլոր կենտրոններում ծառայություններ ստանում են և երեխաները, և ընտանիքները:

Տարածքային հաշվառման է վերցվել և ուղարկվել կենտրոնացված հաշվառման առանց ծնողական խնամքի մնացած 17 երեխայի անձնական գործ:

Կարևորագույն խնդիր է հանրակրթությունից խուսափող և հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հարցը: Շարունակվում է հանրակրթությունից դուրս մնացած երեխաների տվյալների հավաքագրումը և վերլուծությունը: 2018 թվականին բացահայտված 35 դեպքի առնչությամբ իրականացվում են աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներ: Ցանկանում եմ հատուկ նշել, որ այս թվի մեջ ամենաքիչ տոկոսը կազմում է սոցիալական պատճառով պայմանավորված դպրոց չհաճախելը է, առավել տարածված է ծնողի ցանկությամբ հանրակրթության մեջ չներառվելը՝ առաջին դասարանում և ավագ դպրոցում:

Որպես ՀՀ ոստիկանության պետի 2013 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 3837-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի անդամ՝ տեղյակ եմ հանրապետության տարածքում մուրացիկությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասներին հայտնաբերելու ուղղությամբ տարվող աշխատանքներին, տիրող իրավիճակին: Հատկանշական է, որ Շիրակի մարզը, ունենալով բազում խնդիրներ, չունի մուրացիկ, թափառաշրջիկ երեխաներ: Կարծում եմ սա մեր, ոստիկանության, երեխաների խնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ կազմակերպությունների ու կառույցների ձեռքբերումն է: 2018 թվականին աշխատանքներ են տարվել իրավախախտ, վարքային խնդիրներ ունեցող, հակասոցիալական վարք դրսևորող 23 երեխայի հետ:

2015 թվականին Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքի ընդունմամբ առաջացավ դեպք վարող մասնագետների ինստիտուտը: Այս դժվարին, բարդ ու պատասխանատու գործը դրվեց Սոցիալական աջակցություն տրամադրող տարածքային բաժինների և գործակալությունների դեպք վարող մանագետների ուսերին: Բաժինը հստակ պատկերացում ունենալով սոցիալական աշխատանքի բարդության, խնդիրների մասին՝ Միջազգային հասարակական կազմակերպությունների աջակցությամբ նախաձեռնեց սոցիալական դեպքի վարում վերապատրաստումների ցիկլը, որը անհրաժեշտ էր և նպատակային: Սկիզբ դրվեց աշխատանքային նոր մոդելի կիրառմանը. յուրաքանչյուր դժվար դեպք քննարկել բազմամասնագիտական թիմով՝ օգտագործելով բոլոր կազմակերպությունների ունեցած ռեսուրսը՝ հանուն երեխայի լավագույն շահի: Արդյունքում 2018 թվականին 52 դեպքի լայնաֆորմատ քննարկում է իրականացվել, այդ թվում ընտանեկան բռնության ենթարկված 6 անձի:

2018 թվականին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 294 երեխայի տրամադրվել է վկայագիր: Բաժնի կողմից բազմամասնագիտական թիմերին ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդական օգնություն, յուրաքանչյուր երեխայի համար լրացվել է անհատական սոցիալ-վերականգնողական ծրագիր: Հաշմանդամություն ունեցող երեխաները բաժնի կողմից ուղղորդվում են համապատասխան ծառայություններ տրամադրող կազմակերպություններ:

2018 թվականի ընթացքում հաշվառվել է 22 որդեգրողի թեկնածու և որդեգրման ենթակա 11 երեխա:

2018 թվականին բաժին է այցելել 157 քաղաքացի՝ տարաբնույթ խնդիրներով: Նրանց տրամադրվել է իրավաբանական, հոգեբանական խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել է սոցիալական աջակցություն:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեզ հետ ակտիվ համագործակցող բոլոր կազմակերպություններին, մարմիններին, կառույցներին: Կարծում եմ, արդեն իսկ ձևավորված է փոխադարձ վստահության դաշտ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված յուրաքանչյուր դեպքի արագ, անհապաղ արձագանքման և ուղղորդման գործում: Սակայն երեխաների խնդիրներով զբաղվող տարբեր կառույցներ հիմնականում մասնագիտացված են իրենց ոլորտում և շատ դեպքերում դրսևորում են հատվածական

մոտեցում: Ժամանակն է երեխայի խնդիրների հանդեպ ցուցաբերել համալիր մոտեցում: Մյուս հիմնախնդիրը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի վաղ հայտնաբերման, խնդիրների կանխարգելման, վաղ և համակարգված միջամտության հարցերում միջգերատեսչական համագործակցության պակասն է: Համոզված եմ, քանի դեռ մեկ երեխայի խնդիր մնում է չլուծված, մեր աշխատանքը չենք կարող բավարար համարել: Պատրաստ ենք նոր ու գործնական առաջարկությունների, համագործակցության՝ նոր ընթացակարգերով, դեպքերի առանձնահատկությունից ելնելով լայնաֆորմատ քննարկումների՝ առանցքում ունենալով երեխայի լավագույն շահը:

Հուսով եմ, որ 2019 թվականին համատեղ աշխատանքի արդյունքում կգրանցենք նորանոր հաջողություններ ու կունենանք հաճելի ու կարևոր ձեռքբերումներ:

Ընտանիքի, կանանց և երեխաների
իրավունքների պաշտպանության բաժն պետ
Լ. Գորգինյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի 2018 թվականի հաշվեու ժամանկահատվածի ամփոփ հաշվետվություն

Հարգարժան պարոն մարզպետ,

մարզխորհրդի հարգելի անդամներ, հարգելի ներկաներ

2018թ.-ին ներքին աուդիտի բաժինը իր տարեկան ծրագիրը իրականացրել է ամբողջությամբ, առանց շեղումների: Կազմվել են աուդիտորական հաշվետվություններ և եզրակացություններ, որոնք ներկայացվել են ներքին աուդիտի կոմիտեին և ներմուծվել են ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգ:

Ներքին աուդիտի 2018թ. տարեկան և ռազմավարական ծրագրին համապատասխան հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի բաժինը իրականացրել է 71 աուդիտորական առաջադրանք, այդ թվում 26 համակարգի գնահատման, 36 ֆինանսական և 9 համապատասխանության աուդիտ, որից 59-ը պետական ոչ առևտրային կազմակերպություններում և 12-ը փակ բաժնետիրական ընկերություններում: Բոլոր 36 ֆինանսական աուդիտի շրջանակներում ուսումնասիրվել է գնումների գործընթացի և պայմանագրերի կատարման ընթացքը: Ուսումնասիրված 36 կազմակերպություններում գնման գործընթացը չի գերազանցել գնման բազային միավորի 20-պատիկը:

Վերը նշված ժամանակահատվածում իրականացված աուդիտների արդյունքում հայտնաբերվել են 79 միավոր թերություններ և խախտումներ, որի արդյունքներով արձանագրվել է 45 661 380 դրամ վերականգնման ենթակա գումար, աուդիտորական 10 հաշվետվություն ուղարկվել է իրավապահ մարմիններին համապատասխան ընթացք տալու նպատակով, 5 կազմակերպությունների ղեկավարների նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, աշխատանքից ազատվել են 1 առողջապահական փակ բաժնետիրական ընկերության և 1 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններ:

Աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարներին և պատասխանատու անձանց տրվել են համապատասխան հանձնարարականներ արձանագրված խախտումների և թերությունների ուղղման վերաբերյալ:

Հարկ եմ համարում տեղեկացնել, որ բաժնի կողմից իրականացվել է նաև 7 մասնագիտական ստուգում, որի արդյունքում հայտնաբերվել է վերականգման ենթակա 5 885 640 դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մ.Մուրադյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի 2018 թվականի հաշվեու ժամանկահատվածի ամփոփ հաշվետվություն

Հարգարժան պարոն մարզպետ,

մարզխորհրդի հարգելի անդամներ, հարգելի ներկաներ

2018թ.-ին ներքին աուդիտի բաժինը իր տարեկան ծրագիրը իրականացրել է ամբողջությամբ, առանց շեղումների: Կազմվել են աուդիտորական հաշվետվություններ և եզրակացություններ, որոնք ներկայացվել են ներքին աուդիտի կոմիտեին և ներմուծվել են ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգ:

Ներքին աուդիտի 2018թ. տարեկան և ռազմավարական ծրագրին համապատասխան հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի բաժինը իրականացրել է 71 աուդիտորական առաջադրանք, այդ թվում 26 համակարգի գնահատման, 36 ֆինանսական և 9 համապատասխանության աուդիտ, որից 59-ը պետական ոչ առևտրային կազմակերպություններում և 12-ը փակ բաժնետիրական ընկերություններում: Բոլոր 36 ֆինանսական աուդիտի շրջանակներում ուսումնասիրվել է գնումների գործընթացի և պայմանագրերի կատարման ընթացքը: Ուսումնասիրված 36 կազմակերպություններում գնման գործընթացը չի գերազանցել գնման բազային միավորի 20-պատիկը:

Վերը նշված ժամանակահատվածում իրականացված աուդիտների արդյունքում հայտնաբերվել են 79 միավոր թերություններ և խախտումներ, որի արդյունքներով արձանագրվել է 45 661 380 դրամ վերականգնման ենթակա գումար, աուդիտորական 10 հաշվետվություն ուղարկվել է իրավապահ մարմիններին համապատասխան ընթացք տալու նպատակով, 5 կազմակերպությունների ղեկավարների նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, աշխատանքից ազատվել են 1 առողջապահական փակ բաժնետիրական ընկերության և 1 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններ:

Աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարներին և պատասխանատու անձանց տրվել են համապատասխան հանձնարարականներ արձանագրված խախտումների և թերությունների ուղղման վերաբերյալ:

Հարկ եմ համարում տեղեկացնել, որ բաժնի կողմից իրականացվել է նաև 7 մասնագիտական ստուգում, որի արդյունքում հայտնաբերվել է վերականգման ենթակա 5 885 640 դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մ.Մուրադյան